

1.3. Գներ և սակագներ

Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2005թ. հունվար-ապրիլին

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքս ¹⁾	Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս ²⁾	Գների ինդեքսը շինարարությունում ³⁾	Բեռնափոխադրումների սակագների ինդեքս ⁴⁾	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս ⁵⁾	Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս ⁶⁾
Հունվար	105.4	100.5	100.7	97.3	98.2	100.3
Փետրվար	99.3	94.8	99.9	98.9	98.4	100.6
Մարտ	99.1	101.2	122.9	98.7	99.6	98.3
Ապրիլ	99.1	97.4	99.9	98.5	97.3	103.4
2005թ. ապրիլը 2004թ. դեկտեմբերի նկատմամբ	102.8	93.9	123.6	93.5	92.9	98.6
2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ	103.6	114.2	111.5	92.1	106.4*	104.9*

*) 2005թ. ապրիլի և 2004թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

¹⁾ Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

²⁾ Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում՝ 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողտնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ժՏԾՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

³⁾ Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:


⁴⁾ Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)՝ բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա:

⁵⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

⁶⁾ Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:


Գների, սակագների աճի տեմպերը 2004-2005թթ. հունվար-ապրիլին

(նախորդ տարվա հունվար-ապրիլի նկատմամբ, %)




Արտարժույթային շուկա: 2005թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետության սպառողական և արժույթային շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի համապատասխանաբար 0.9% և 3.9% նվազում: 2005թ ապրիլին 2004թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների 2.8% հավելաճն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 7.9% նվազումով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է նմանատիպ միտում. սպառողական գների 3.5% հավելաճին զուգընթաց գրանցվել է հաշվարկային փոխարժեքի 1.5% նվազում: 2005թ. ապրիլին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 447.89 դրամ, ինչը 19.6% ցածր է նախորդ տարվա ապրիլի համապատասխան ցուցանիշից (556.86 դրամ):

ՀՀ սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի փոփոխությունները 2004-2005թթ. հունվար-ապրիլին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)



Սպառողական գներ: 2005թ. ապրիլին մարտի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 0.9% գնանկում, ինչը մեծապես պայմանավորվել է պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխություններով:

Սպառողական գների հավելաճը 1996-2005թթ. ապրիլին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)




Սպառողական գների փոփոխությունները 2005թ. ապրիլին

(%)

	2005թ.				հունվար-ապրիլ 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	ապրիլ				
	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2005թ. մարտի նկատմամբ	2004թ. ապրիլի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Սպառողական գների ինդեքս	102.8	99.1	101.3	115.0	103.6
<i>այդ թվում՝</i>					
պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	104.2	98.7	102.3	121.4	105.3
ոչ պարենային ապրանքների	99.8	99.8	99.7	102.6	100.1
ծառայությունների	99.6	100.1	98.7	102.7	99.6

ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2005թ. հունվար-ապրիլին

(նախորդ ամսվա համեմատ, %)



Պարենային ապրանքների գներ: 2005թ. ապրիլին մարտի համեմատ պարենային ապրանքների շուկայում արձանագրվել է 1.4% գնանկում: Դրան հիմնականում նպաստել է ձկնամթերքի, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերում գրանցված գնանկումը:

Գների փոփոխություններն ըստ պարենային առանձին ապրանքախմբերի


(%)

	2005թ.				հունվար-ապրիլ 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	ապրիլ				
	2005թ. մարտի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. ապրիլի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Պարենային ապրանքներ					
(ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	98.7	104.2	102.3	121.4	105.3
Պարենային ապրանքներ	98.6	104.6	102.6	123.9	106.0
հացամթերք	99.7	99.2	93.5	124.8	93.9
մսամթերք	100.0	99.9	104.0	121.8	107.8
ձկնամթերք	84.2	115.1	170.8	258.0	288.0
կաթնամթերք	99.5	100.5	98.5	107.5	105.2
ձու	99.5	98.6	111.5	133.2	109.9
կենդանական և բուսական յուղ	98.8	100.3	97.7	110.1	98.9
միրգ	101.4	119.1	123.1	158.6	129.0
բանջարեղեն և կարտոֆիլ	95.3	133.4	108.2	124.4	112.1
շաքարավազ	99.4	98.5	98.3	97.5	99.1
սուրճ, թեյ, կակաո	100.7	101.3	99.0	103.4	99.5
հրուշակեղեն	100.1	100.3	103.8	107.5	103.8
այլ մթերքներ	100.3	100.8	102.4	102.4	102.0
ոչ ոգելից խմիչք	100.2	103.3	108.5	113.6	107.9
<i>Ոգելից խմիչք և ծխախոտ</i>	100.0	100.2	99.1	100.9	98.8

2005թ. ապրիլին մարտի համեմատ ձկնամթերքի ապրանքախմբում գրանցվել է 15.8% գնանկում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է ձկնամթերքի 46.6% գնաճ), ինչը հիմնականում ապխտած և թարմ «սիգ» տեսակի ձկան համապատասխանաբար 18.7% և 15.8% գնանկման արդյունք է: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում ձկնամթերքի գները նվազել են 35.8-1.9%, ընդ որում, գնանկման համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Վաղարշապատում: Մայրաքաղաքում ձկնամթերքի գնանկումը կազմել է 10.1%:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2005թ. փետրվար-ապրիլին հանրապետությունում գրանցվել է 13.2% ընդհանուր գնանկում, այդ թվում, ապրիլին մարտի համեմատ գնանկումը կազմել է 4.7%: Նշված ժամանակահատվածում արձանագրվել է լոլիկի (12.4%), գազարի (12.2%), վարունգի (10.6%), կարտոֆիլի (7.3%), ճակնդեղի (4.3%), գլուխ սոխի (3.0%) գնանկում: Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում բանջարեղենի և կարտոֆիլի գները նվազել են 12.5-0.4% (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք.Եղեգնաձորում), իսկ Թալին և Վաղարշապատ քաղաքներում գրանցվել է համապատասխանաբար 0.1% և 3.8% գնաճ: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը կազմել է 6.4%:


Բանջարեղենի և կարտոֆիլի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-ապրիլին
(նախորդ ամսվա նկատմամբ, %)



Մրգի ապրանքախմբում 2005թ. փետրվար-մարտին հանրապետությունում գրանցված 4.9% ընդհանուր գնանկմանը ապրիլին հաջորդել է 1.4% գնաճ: Նշված ժամանակահատվածում գրանցվել է խաղողի (3.5%), խնձորի (1.8%), տանձի (0.7%), ինչպես նաև ներմուծված (ցիտրուսային և արևադարձային) մրգից՝ ադամաթզի (4.7%), նարինջի (1.8%) գնաճ: Հանրապետության դիտարկված 7 քաղաքներում գրանցվել է մրգի 0.4-19.2% գնաճ (համեմատաբար բարձր գնաճ արձանագրվել է ք. Հրազդանում (Չարենցավանում)), իսկ Գյումրի, Երևան և Կապան քաղաքներում՝ 3.4-0.5% գնանկում:

Մրգի գների փոփոխությունները 2003-2005թթ. հունվար-ապրիլին

(Նախորդ ամսվա նկատմամբ, %)



2005թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է տավարի (0.2%) խոզի (0.5%), ոչխարի (1.0%) մսի գնաճ: Հանրապետության դիտարկված քաղաքներից 5-ում գրանցվել է մսամթերքի 0.3-1.0% գնաճ, 4 քաղաքներում՝ 1.5-0.1% գնանկում, իսկ ք. Կապանում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2005թ. ապրիլին 2004թ. դեկտեմբերի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.2% գնանկում, ինչը, թերևս, պայմանավորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի նվազմամբ:

Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները

(%)

	2005թ.				հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	ապրիլը				
	2005թ. մարտի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. ապրիլի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ոչ պարենային ապրանքներ այդ թվում՝	99.8	99.8	99.7	102.6	100.1
հագուստ և գործվածք	99.2	98.8	97.0	98.5	97.4
վառելիք	99.6	112.7	122.0	152.2	121.8
կահույք	98.3	98.1	90.0	88.8	90.8
գորգեղեն	99.5	99.6	98.0	101.9	98.6
տեքստիլեղեն	99.9	99.9	100.2	98.9	101.0
կենցաղային էլեկտրաապրանքներ	99.0	97.4	91.9	87.7	92.5
խոհանոցային սպասք	99.8	99.2	97.0	98.5	96.9
լվացամիջոցներ	100.0	100.2	101.1	102.7	101.1
շինանյութեր	100.0	99.9	98.1	96.9	98.1
այգեգործական ապրանքներ	100.0	100.9	103.7	109.4	103.8
դեղամիջոցներ	99.5	99.0	97.6	91.9	98.7
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	102.3	96.2	106.1	120.7	106.4
մշակույթի ապրանքներ	99.0	96.8	86.0	83.0	86.3
գրեմական պիտույքներ	100.1	100.1	101.5	101.3	101.5
զեղահարդարման ապրանքներ	100.0	100.1	99.9	102.1	100.4
ոսկերչական ապրանքներ	99.2	95.7	93.5	118.9	94.8
անձնապիտո ապրանքներ	99.7	99.1	97.3	96.5	97.7

2005թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 2.6% և 6.6% գնաճ, իսկ 2004թ. դեկտեմբերի համեմատ՝ 3.8% և 2.9% գնանկում:

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2005թ. ապրիլին 2004թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է սակագների 0.4% նվազում (Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 1.4% հավելաճ):

Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները

(%)

	2005թ.				
	ապրիլը				հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ
	2005թ. մարտի նկատմամբ	2004թ. դեկտեմբերի նկատմամբ	2004թ. ապրիլի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ծառայություններ, ընդամենը	100.1	99.6	98.7	102.7	99.6
<i>այդ թվում՝</i>					
կենցաղային	100.8	102.1	100.3	99.0	99.3
բնակարանային-կոմունալ	100.1	99.7	98.9	102.7	101.6
բուժսպասարկման	100.0	99.7	100.6	98.8	98.6
տրանսպորտի	99.2	98.1	95.0	101.8	94.8
կապի	102.5	99.2	96.9	107.0	96.6
մշակույթի	100.8	102.6	116.0	156.4	119.7
կրթության համակարգի	99.2	98.9	99.9	100.9	100.8
հանգստի կազմակերպման	98.8	98.3	94.4	98.2	98.2
հանրային սննդի	100.0	100.1	105.5	112.9	107.0
իրավական և բանկային	100.0	100.0	100.0	100.0	100.0

Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները: Հանրապետությունում դիտարկված 9 քաղաքներում 2005թ. ապրիլին մարտի համեմատ գրանցվել է սպառողական գների 1.6-0.4% նվազում (գնանկման անենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Եղեգնաձորում), իսկ ք. Թալինում պահպանվել է սպառողական գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 1.0%:

Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2005թ. ապրիլի 29-ի դրությամբ

(դրամ՝ կգ-ի համար)

	Միս տավարի	Պանիր	Կարագ	Բուսական յուղ, լիտր	Չու, տասնյակի համար	Շաքարավազ	Կարտոֆիլ	Գլուխ սոխ	Կաղամբ	Խնձոր
ԳԳ, միջինը	1414	1339	1616	665	568	248	117	225	136	400
<i>այդ թվում.</i>										
Երևան	1400	1354	1618	680	583	248	120	229	132	408
Գյումրի	1481	1333	1671	661	578	262	112	219	116	372
Վանաձոր	1450	1241	1537	598	596	221	111	236	150	375
Վաղարշապատ	1400	1300	1550	590	540	240	122	200	150	340
Թալին	1500	1350	1700	700	500	255	110	250	150	400
Դիլիջան	1500	1200	1700	625	563	251	120	200	150	400
Հրազդան, Չարենցավան	1430	1400	1600	645	540	250	115	220	150	450
Եղեգնաձոր	1400	1300	1650	700	500	250	100	200	200	300
Մարտունի	1350	1300	1600	675	500	250	80	200	95	400
Կապան	1400	1380	1620	672	530	264	142	246	172	376
Արտաշատ	1400	1200	1600	600	500	250	108	217	130	375

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2005թ. ապրիլի 29-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6728 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Թալինում՝ 6915 դրամ, իսկ ամենացածրը՝ ք. Վաղարշապատում՝ 6432 դրամ), ինչը 0.9% ցածր է նույնաժամանակահատվածի 2004թ. ապրիլի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքից (6790 դրամ):

Հանրապետության դիտարկված 6 քաղաքներում 2005թ. ապրիլին մարտի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.9-0.1% գնանկում (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Դիլիջանում), իսկ մյուս 4 քաղաքներում՝ 0.2-0.4% գնաճ:

Մայրաքաղաքում արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.4% գնանկում:

2005թ. ապրիլին մարտի համեմատ հանրապետության դիտարկված 5 քաղաքներում ծառայությունների սակագներն աճել են 0.1-2.5% (հավելաճի համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Թալինում), 4 քաղաքներում գրանցվել է սակագների 0.4-0.2% նվազում, իսկ ք. Գյումրիում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը:

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2005թ. ապրիլին 2004թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի

(%)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից՝			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչք և ծխախոտ	ոչ պարենային ապրանքների	
ԳՅ, ընդամենը	102.8	103.4	104.6	100.2	99.8	99.6
<i>այդ թվում՝</i>						
Երևան	103.5	104.2	105.7	100.0	99.6	99.8
Գյումրի	100.9	101.2	101.7	100.2	99.4	99.3
Վանաձոր	101.7	102.2	103.0	99.4	99.8	99.5
Վաղարշապատ	102.0	102.6	103.1	100.7	100.8	98.9
Թալին	101.9	102.6	103.4	100.0	100.6	98.6
Դիլիջան	101.4	102.0	102.8	100.8	99.0	98.3
Հրազդան, Չարենցավան	103.0	103.7	105.0	100.4	99.8	99.6
Եղեգնաձոր	101.0	101.3	101.8	100.1	99.7	99.8
Մարտունի	101.4	101.9	102.3	99.9	101.0	99.0
Կապան	102.5	103.0	103.6	103.0	100.6	100.5

Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2005թ. հունվար-ապրիլին Արտաշատ¹ քաղաքում

(նախորդ ամսվա նկատմամբ, %)

	Սպառողական գների ինդեքսը	այդ թվում՝				ծառայությունների
		սպառողական ապրանքների	դրանցից՝			
			պարենային ապրանքների	ոգելից խմիչքի և ծխախոտի	ոչ պարենային ապրանքների	
Հունվար	104.1	105.0	106.3	99.1	102.9	100.1
Փետրվար	99.5	99.2	99.2	100.1	99.1	100.6
Մարտ	98.4	98.2	97.4	103.2	99.0	99.1
Ապրիլ	99.4	99.3	98.6	103.3	100.3	100.1
Ապրիլը 2004թ. դեկտեմբերի նկատմամբ	101.3	101.6	101.2	105.8	101.3	99.9

Արդյունաբերողների արտադրանքի գներ: 2005թ. ապրիլին 2004թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում արձանագրվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 6.1% գնանկում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 5.9% գնաճ):

¹ Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում) գների դիտարկումը կատարվում է 2004թ. փետրվարից սկսած:

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխություններն ըստ արդյունաբերության ճյուղերի

(%)

	2005 թվականի			հունվար-ապրիլը 2004թ. հունվար- ապրիլի նկատմամբ
	ապրիլը			
	2005թ. մարտի նկատմամբ	2004թ. ապրիլի նկատմամբ	2002թ. նկատմամբ	
Ամբողջ արդյունաբերությունը	97.4	111.1	148.2	114.2
<i>այդ թվում՝</i>				
էլեկտրաէներգետիկա	93.9	93.1	92.0	97.0
գունավոր մետալուրգիա	93.3	150.2	312.8	159.6
քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն	100.0	99.8	127.8	100.6
մեքենաշինություն	98.8	96.9	98.7	101.5
այլ արդյունաբերական արտադրու - թյուն(ոսկերչական արդյունաբերություն)	95.8	105.3	118.7	101.4
անտառային, փայտամշակման, թղթի- ցեյտուղզի արդյունաբերություն	99.8	106.3	104.7	96.8
շինանյութերի արդյունաբերություն	100.2	110.0	114.8	110.7
թեթև արդյունաբերություն	96.4	118.0	117.0	107.4
սննդի (ներառյալ ալյուրի ու համակց - ված կերերի) արդյունաբերություն	103.8	96.5	127.7	94.9
պոլիգրաֆիական արդյունաբերություն	94.6	71.1	101.4	96.4


Բեռնափոխադրումների սակագներ: 2005թ. ապրիլին մարտի համեմատ հանրապե-
տությունում արձանագրվել է բեռնափոխադրումների սակագների 1.5% նվազում, ինչը
հիմնականում պայմանավորվել է օդային, երկաթուղային և խողովակաշարային տրանսպոր-
տով բեռնափոխադրումների սակագների համապատասխանաբար 6.2%, 2.8 և 2.3% նվա-
զումով: Ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների մակարդակը
նշված ժամանակահատվածում աճել է 2.5%:

2005թ. ապրիլին 2004թ. ապրիլի համեմատ բեռնափոխադրումների սակագների
ինդեքսը կազմել է 89.9%, այդ թվում, երկաթուղային տրանսպորտով՝ 87.8%, ավտոմոբիլայի-
նով՝ 100.3%, օդայինով՝ 84.3%, խողովակաշարային տրանսպորտով՝ 88.6%, իսկ հունվար-
ապրիլին նախորդ տարվա հունվար-ապրիլի համեմատ՝ համապատասխանաբար 92.1%,
91.2, 97.9, 89.4, 91.7%:

**Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության
արտադրության միջոցների գնման գներ:** 2005թ. ապրիլին մարտի համեմատ գյուղացիական
տնտեսությունների կողմից իրացված գյուղատնտեսական մթերքի գները հանրապետու-
թյունում նվազել են 2.7%, ինչը իրացման բոլոր ուղղություններով գյուղատնտեսական
մթերքի 5.6-2.6% գնանկման արդյունք է:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսները ՀՀ մարզերում 2005թ. ապրիլին ըստ բուսաբուծության և անասնապահության ճյուղերի

(նախորդ ամսվա նկատմամբ, %)



2005թ. ապրիլին 2004թ. ապրիլի համեմատ գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 104.5%, այդ թվում, բուսաբուծական մթերքինը՝ 104.9%, անասնապահական մթերքինը՝ 104.4%:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները ՀՀ-ում 2001-2005թթ. ապրիլին

(դրամով)

	Չափի միավորը	2001	2002	2003	2004	2005
Ցորեն	կգ	103	102	98	158	110
Գարի	- ,, -	92	97	96	150	103
Լոբի	- ,, -	365	368	397	311	350
Կարտոֆիլ	- ,, -	94	129	137	61	69
Կաղամբ	- ,, -	102	48	70	40	54
Գազար	- ,, -	72	100	50	100	88
Գլուխ սոխ	- ,, -	...	137	146	300	...
Խնձոր	- ,, -	136	194	167	167	187
Տանձ	- ,, -	136	180	200	240	...
Խաղող	- ,, -	200	...	400
Ընկույզ (կեղևով)	- ,, -	688	754	806	1000	...
Մեղր	- ,, -	2762	2500	2124	2500	2441
Միս տավարի	- ,, -	883	878	966	1050	1132
Միս ոչխարի	- ,, -	875	923	988	1092	1119
Միս խոզի	- ,, -	1122	956	941	1407	1530
Կաթ	լ	106	100	103	105	107
Մածուն	- ,, -	171	177	173	176	185
Պանիր (յուղոտ)	կգ	805	796	779	858	864
Չուլ	հատ	40	42	42	46	46
Միամյա խոտեր	կգ	27	19	22	29	20
Բազմամյա խոտեր	- ,, -	24	31	20	40	28

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներն ըստ մարզերի

(%)

	Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը		Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը	
	2005թ. ապրիլին		2005թ. ապրիլին	
	2005թ. մարտի նկատմամբ	2004թ. ապրիլի նկատմամբ	2005թ. մարտի նկատմամբ	2004թ. ապրիլի նկատմամբ
ՀՀ, ընդամենը	97.3	104.5	103.4	106.6
<i>այդ թվում</i>				
Արագածոտն	96.3	102.4	103.5	107.9
Արարատ	96.0	98.1	100.0	100.4
Արմավիր	87.7	107.6	99.9	106.3
Գեղարքունիք	98.3	109.0	98.1	107.9
Լոռի	95.9	104.4	94.4	93.1
Կոտայք	98.6	103.5	103.0	103.8
Շիրակ	97.5	93.3	102.5	104.4
Սյունիք	94.7	101.9	98.9	105.4
Վայոց ձոր	102.6	106.1	103.4	113.8
Տավուշ	99.8	106.4	100.6	103.4